ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2198-Ա/2 «29» Դեկտեմբերի 2022 թ.

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա», «գ» և «ժ.1» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) 2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի կանոնակարգը՝ համաձայն հավելված № 1-ի,

2) 2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի մասնակցության հայտի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված № 2-ի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/29/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի Դեկտեմբերի 29 *-ի*
№ 2198 *-Ա/2 հրամանի*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2023 թվականին անցկացվող սեղանի թենիսի սիրողական մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է.

1) մասսայականացնել սեղանի թենիսը Հայաստանի Հանրապետությունում,

2) վերականգնել երբեմնի սիրված մարզաձևի ավանդույթները,

3) բնակչության տարբեր տարիքային խմբերի առօրյայում ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորումը:

Խնդիրներն են՝

4) զանգվածային սպորտի և ակտիվ կենսակերպի քարոզչության ապահովում,

5) սեղանի թենիսի կանոնավոր պարապմունքներին բնակչության (միջին և բարձր տարիքի անձանց) ներգրավվածության ապահովում, առողջ ապրելակերպ վարելու նկատմամբ հետաքրքրության բարձրացում:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

3. Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացվում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի և մրցավարական հանձնաժողովի կողմից՝ համագործակցելով Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի հետ:

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

4. Մրցաշարը անց է կացվելու 2 փուլով՝ (1-ին փուլը՝ մարզային, 2-րդ փուլը՝ եզրափակիչ):

1) 1-ին փուլն անցկացվելու է մինչև 2023 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում,

2) 2-րդ՝ եզրափակիչ փուլի Մրցաշարը անց է կացվելու 2023 թվականի մարտի 2-րդ տասնօրյակում՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում, ժամը 11:00-ից (անցկացման համար նախատեսված է 2 օր),

3) մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից երկու ժամ առաջ՝ անձը հաստատող փաստաթղթերով՝

ա. անձնագիր կամ ծննդյան վկայական,

բ. յուրաքանչյուր թիմի մասնակիցը պետք է ունենա տվյալ մարզի գրանցում, աշխատանքի կամ փաստացի բնակության վայրից տեղեկանք,

գ. բժշկի թույլատվություն:

IV. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Մրցաշարին կարող են մասնակցել ցանկություն ունեցող բոլոր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները, (սիրողական մարզիկներ, դպրոցականներ, ուսանողներ, պետական և մասնավոր ոլորտի աշխատողներ, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ, օտարերկրացի զբոսաշրջիկներ, գործող պրոֆեսիոնալ մարզիկները՝ առանձին խմբով), ովքեր չունեն առողջական խնդիրներ: Մրցաշարի ընթացքում առաջացած առողջական խնդիրների դեպքում պատասխանատվությունը կրում է մասնակիցը:

6. Մրցաշարի գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբում կարող են մասնակցել այն մարզիկները, ովքեր վերջին 5 տարիների ընթացքում մասնակցել են սեղանի թենիսի ՀՀ առաջնություններին և միջազգային մրցաշարերին, բուքմեյքերական գրասենյակների կողմից կազմակերպվող վճարովի խաղերին:

ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում՝ ըստ երկու տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբերի 1-3-րդ տեղերը գրաված մասնակիցների հայտերը (18 մասնակից) «ՀՀ Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի եզրափակիչ փուլին մասնակցելու համար ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն մինչև 2023 թվականի մարտի 3-ը՝ համաձայն կցված հայտի ձևի:

7. Մրցաշարը կանցկացվի 2 տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբերով, 2 փուլով՝

1) 1-ին փուլի մրցումները՝ Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախի Հանրապետությունում,

2) Մրցաշարի 2-րդ՝ եզրափակիչ փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում ըստ տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբերի 1-ից 3-րդ տեղեր գրաված տղամարդիկ և կանայք,

3) 1-ին տարիքային խումբ՝ 18-ից 40 տարեկան (1983-2005 թթ. ծնված) կանայք և տղամարդիկ,

7. 2-րդ տարիքային խումբ՝ 41 և բարձր տարիքի (1982 թ. ծնված) կանայք և տղամարդիկ:

8. Գործող պրոֆեսիոնալ մարզիկների խումբ՝ տարիքային սահմանափակում չկա (տղամարդիկ և կանայք):

9. Օտարերկրյա քաղաքացիները մրցաշարի եզրափակիչ փուլին մասնակցում են, տարածաշրջանային (Երևանի քաղաքային, Հայաստանի Հանրապետության մարզային և Արցախի Հանրապետության) փուլերում 1-3 տեղերը գրավելու դեմքում:

Մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան իրենց անձնական ռակետներով:

10. Մրցաշարի եզրափակիչ փուլի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը, իսկ 1-ին փուլի անցկացման պայմանները որոշում են մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը և Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի համապատասխան վարչությունը:

11. Եզրափակիչ փուլ.

1) հանդիպումները կանցկացվեն երեք (3) խաղափուլից: 1-ից 4-րդ տեղերի համար կխաղան հինգ (5) խաղափուլից,

2) Մրցաշարի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը,

3) պահանջվող պայմաններին չհամապատասխանող մասնակիցների մասնակցությունը առաջնությանը չի թույլատրվելու:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

12. Մրցաշարի 1-ին փուլին 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրված մարզիկները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ 2-րդ փուլին երկու տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով, իսկ 1-ից 10-րդ տեղեր գրված մասնակիցները՝ դրամական մրցանակներով:

13. Մրցաշարի բոլոր մասնակիցներին տրվում են մարզաշապիկներ և հավաստագրեր: Արդյունքներն ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

VI. ԾԱԽՍԵՐԸ

14. Մրցաշար 1-ին փուլի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցավարներին սնունդ, հավաստագրեր և 2-րդ փուլի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցավարներին սնունդ, ճանապարհածախս, պարգևավճար, մարզադահլիճի, ռադիոհանգույցի վարձակալում, մարզադահլիճի լուսային ձևավորում, մարզահագուստ (մարզաշապիկ՝ բոլոր մասնակիցներին և մրցավարներին), մասնակիցներին մասնակցության համարներ, գավաթներ, մեդալներ, բոլոր մասնակիցներին հավաստագրեր, շնորհակալագրեր, կաշվե թղթապանակներ, ծաղկեփնջեր, մասնակիցներին տեղում սնունդ, հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին, հաղորդավարի ծառայություն, գովազդային նյութերի պատրաստման, նկարահանման, ուղիղ եթերի

ապահովում, մրցաշարի գովազդման, մարքետինգի, սեղանի թենիսի սեղանների ձեռքբերում, մրցավայրի ձևավորման, տրանսպորտային միջոցների ապահովում մարզագույքը տեղափոխելու համար, գրենական պիտույքների ծախսերը կատարվում է ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, մասնակիցների գործուղման ծախսերը (գիշերակաց, ճանապարհածախս) հոգում է գործուղող կազմակերպությունը:

15. Դրամական մրցանակներ երկու տարիքային և գործող պրոֆեսիոնալ մարզիկների խմբերի 1-ից 10-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 500.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 300.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 5-10-րդ տեղերը՝ 50.000-ական ՀՀ դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն, ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

16. Մասնակիցների գործուղման ծախսերը (գիշերակաց, սնունդ և ճանապարհածախսը) հոգում է գործուղող կազմակերպությունը:

VII. ՀԱՅՏԵՐԸ

17. Մրցաշարին մասնակցության համար ներկայացվում է հայտ՝ համաձայն հավելված 2-ի, անձնագրի կամ նույնականացման վկայականի և մրցումներին մասնակցելու համար բժշկի թույլտվության պատճենները: Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչություն՝ մինչև 2023 թվականի մարտի 3-ը ներառյալ: Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ **(010) 59-96-33, (010) 59-96-32** մասնագիտական հարցերի դեպքում զանգահարել **(094) 05-51-35** երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի Դեկտեմբերի 29*-ի*
№ 2798 *-Ա/2 հրամանի*

2023 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի հայտի օրինակելի ձև

№	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Ծննդյան թիվը*	*Անձնագիր, (սերիա, համար)*	*Բնակության վայրը, հասցեն*	*Հեռախոսի համար*
1.					
2.					
3.					